Երբեմն, դանդաղ քայլերով, մարդիկ են անցնում։ Պառաւ մի կին՝ զողզողացող գլուխով, թեւերի մէջ զգուելի մի շնիկ բռնած։ Սպրդնած դէմքով մի աղջիկ, որի վրայ մեռած տերեւներ են ընկել։ Խանութի մօտ կանգնած մռայլ մի վաճառական՝ հաշիւը գլխին, փոքը ծանր եւ սիրտը ճարպոտ։

Աւազի վրայ թումբեր են կազմուել։ Ծովը առաջացել է մինչեւ կաբինները՝ ծռուած եւ այլանդակ։

Մայթի վրայ քայլերս հնչում են կտրուկ եւ արագ։ Ձեռնափայտս կպցրել եմ գլխարկիս, դէմքս հովին տուել եւ սիրտս անորոշին։

Սիրտս տուել եմ անորոշին։

Ծովափի վիլլաները փակ են։ Արձանները մրսում են։ Երբեմն դատարկ մի տրամուէյ է անցնում։ Հեռադրաթելերը դողում են ու երկարօրէն մայում։

Փողոցը երկար է եւ ամայի։ Գնում եմ թեթեւ։ Քայլերս առաջանում են առանց դժուարութեան, անկաշկանդ, ազատ, եւ այն ամէնը, ինչ որ տեսնում եմ, օգնում է ինձ դեռ աւելի առաջանալու։ Մէջս գտնուող տարօրինակ մի ուժ մղում է ինձ, քշում։

Քշում է աննպատակ կերպով։ սահմանները անհետացել են աչքս դեղին լուսաւորութեան մէջ ու մարմինս իսկ կարծես դուրս է եկել իր կաղապարից։

Աշխարհը ամբողջովին նոր է եւ անմեղ։ Ամէն տեղից կեանքը բխում է բնականօրէն, ինչպէս վտիտ ու զուարթ մի աղբիւրից։ Կոհակները ափն են ընկնում եւ տարածւում այնտեղ, ուր նրանք կանչուած են։

Ոտքերիս տակ մի միջատ է սողում։ Ճանապարհս մի քիչ ծռում եմ։ չլինի՞ թէ նրան որեւէ վնաս հասցնեմ։

Աչքս ժպտում է։

Այն անորոշ զգացումը, որ ապրում է մէջդ, որ ապրում է անսահման մարմնիդ մէջ, դուրս է թափւում իր եզրից, տարածւում է ամէն կողմ, ճառագայթում է եւ դառնում է համաշխարհային։

Մեծ մի շուն կանգնել է մայթի վրայ, շարժում է իր պոչը եւ բարի, գրեթէ մարդկային աչքերով նայում է ինձ։ Ես եւս նրան նայում եմ բարի աչքերով։ Զգում եմ, որ բարի եմ։ Աւելի շուտ՝ զգում եմ, որ մաս եմ ընդհանուր բարիութեան։ Նա ինձ չընչաղատում է, ծածկում, քայլերիս թեթեւ երաշանք է տալիս, մտքիս՝ թեւեր ու սրտիս՝ դինամիութիւն։

Ծովը աչքերիս մէջէն է։ Հեռուում շարքով երկարող առագաստանաւերը երկնքի վրայ նըշաններ են դնում։ կարծես ահա հորիզոնի գիծը պիտի յաղթեն, սահմանը անցնին եւ կամաց կամաց պիտի բարձրանան վեր, դէպի անհունի բաց կապոյտը եւ դանդաղօրէն պատրաստուող ճերմակ ամպերը։

Ա՜հ, լաւ է այդպէս։

Լաւ է զգալ, որ էակները եւ իրերը շաղկապուած են եւ միացած, որ ամէն ինչ արտացոլում է՝ արտացոլում է մէկը միւսին՝ որ լաղուրը աչքերիդ մէջէն է եւ աչքերդ լաղուրի մէջ, որ կեանքը բարդ է եւ մի ու սիրտդ ահա վերը սուրող ճերմակ թռչունի գեղեցիկ թեւերի նման են։

Լա՛ւ է այդպէս։

Սան Նիկոլոի մօտից մի շոգենաւ է մեկնում։ Հեռուից մեքենական խաղալիքի է նըմանում։ Պզտիկ, մի քիչ թեքուած եւ տխուր։ Տխուր ծովի անակնկալի առջեւ։ բաց ծովում անպաշտպան եւ միանակ զգալու առջեւ։

Մեկնում են նաւերը երկրագնդի չորս ծայրից։ քարէանների վրայ գծուած կարմիր գծերի վրայով։ Քարափի մօտ կանգնած մարդիկ վերջին բարեւներն են ղրկում։ օդում թաշկինակներ են շարժւում։ մելամաղձոտ աչքերով նայում են հորիզոնի մօտ փոքրացող, անվերադարձ նաւին ու, մի քիչ աղքատացած, վերադառնում են տուն կամ շարունակում են իրենց ամենօրեայ գործը։ Մի օր էլ, յանկարծ, օրաթերթերը միլիոնաւոր ձեռքերի մէջ դողում են, վախեցած, անձկոտ նայուածքները կանգ են առնում ահաւոր գրերի առջեւ — S. O. S.

S. O. S.

Սրտերի մէջ ծովը փչրում է իր ալիքները։ Վտանգը կանգ է առնում թմրած դիտակցութիւնների առջեւ։ Մահը ման է դալիս փոթորիկի մէջ, ոնթելի հետ վազում է քաղաքները եւ գիւղերը ու թերթի սեւ տողերում երեք գիր է ընտրում ու ցցում նրանց ինչպէս մի շատ ահաւոր բան։ Ո՛չ այլեւս Դիւրերեան կմախքը, որ ման է գալիս անկարելի դաշտանկարնե-

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան